ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-048-03.07.2017-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Աժ պատգամավոր Հրայր Թովմասյան	Հոդված 2.	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետում 2 անգամ գործածված «հանդիսանում է» բառերը առաջարկվում է վերանայել՝ դրա փոխարեն օգտագործելով «ձեռք է բերում» կամ «համարվում է» բառերը:	Առաջարկն ընդունվել է մասնակիորեն: Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին նախադասության մեջ «հանդիսանում է» բառը փոխարինվել է «ձեռք է բերում» բառով, սակայն 2-րդ նախադասության մեջ նույն բառը փոխարինվել է «ճանաչվում է» բառով:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Հոդված 2.	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետում «2017» թիվը փոխարինել «2019» թվով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2017 թվականի ավարտին կարճ ժամանակ է մնացել:	Առաջարկության համաձայն՝ օրինածի 2-րդ հոդվածի 1-ին կետում «2017» թիվը փոխարինվել է «2019» թվով:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն և Աժ պատգամավոր Հրայր Թովմասյան	Օրենքի նախագիծ	Օրինագծում անհրաժեշտ է քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծման կարգի վերաբերյալ ՀՀ Սահմանադրությանը համապատասխան նոր կարգավորումներ նախատեսել, մասնավորապես, հարցերի քննարկման համար նոր միջգերատեսչական հանձնաժողով կազմավորելու համար իրավական հիմքերի ամրագրման, ինչպես նաև ՀՀ Նախագահին քաղաքացիության հարցերի լուծման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու ընթացակարգի մասով:	Առաջարկն ընդունվել է: Օրենքի նախագիծը լրացվել է նոր 7-րդ և 8-րդ հոդվածներով՝ որոնցով գործող օրենքի 26-27-րդ հոդվածները և 5-րդ գլխի վերնագիրը շարադրվել են նոր խմբագրությամբ՝ սահմանելով քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծման ընթացակարգը:	Ընդունվել է :